ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԳԱՎԱՌ 2023

«Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի ուսանողը միջին մասնագիտական կրթություն ստանալու համար քոլեջ ընդունված անձն է:
Ընդունելության քննությունը հաջողությամբ հանձնած դիմորդը ձեռք է բերում քոլեջի ուսանողի կարգավիճակ քոլեջի հետ պայմանագիր կնքելուց և սահմանված ժամկետներում ուսման վարձը վճարելուց հետո:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՈՄՍ

Ուսանողական տոմսը սովորողի կարգավիճակը հաստատող փաստաթուղթ է:
Ուսանողական տոմսը կորցնելու դեպքում սովորողը պարտավոր է անհապաղ տեղեկացնել քոլեջ տնօրինությանը:
Նոր տոմսը տրամադրվում է դիմելու օրվանից 7 աշխատանքային օրվա ընթացքում:

Քոլեջ ընդունված յուրաքանչյուր սովորողի տրամադրվում է ստուգման գրքույք, որը սովորողի առաջադիմության արդյունքները հավաստող փաստաթուղթ է:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Քոլեջում ուսումնական գործընթացն անցկացվում է տեսական և գործնական պարապմունքների միջոցով: Յուրաքանչյուր դասաժամի տևողությունը սահմանված է 80 րոպե:

Տեսական պարապմունքի ժամանակ տրամադրվում է մասնագիտական տեղեկատվական նյութ՝ ծրագրային պահանջներին համապատասխան և իրականացվում է նաև ուսումնաօժանդակ նյութերի ու տեխնիկական միջոցների առկայությամբ:

Գործնական պարապմունքը միտում ունի խորացնել և ամբողջացնել ուսանողի նախապես ձեռք բերված տեսական գիտելիքները:

Գործնական պարամունքի կարևորագույն բաղադրիչ է համարվում ուսանողի կարողությունների բացահայտումը, մասնագիտական հմտությունների խորացումը:

TROZAMIL

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

Տեսական և գործնական գիտելիքները կիրառելու նպատակով ուսումնական գործընթացում որպես անհրաժեշտ բաղադրիչ ներառված է ուսումնական պրակտիկան, որի ընթացքում ուսանողներն ըստ մասնագիտական ոլորտի այցելում են համապատասխան բազաներ:

Պրակտիկան հնարավորություն է ընձեռում գնահատելու սեփական մասնագիտական ուժեղ և թույլ կողմերը, միջանձնային շփման, աշխատանքային միջավայրում հարմարվեու, անհետաձգելի իրավիճակներում արագ կողմնորոշվելու և լուծման ուղիներ գտնելու տեսանկյունից, ինչպես նաև էլ ավելի արժևորելու ընտրած մասնագիտությունը:

Պրակտկայի հիմնական նպատակն է ուսումնական գործընթացի ընթացքում սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքների ամրապնդումն ու խորացումն:

Գավառի բժշկական կենտրոն

ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՊՐԱԿՏԻԿԱ

«Լիկվոր» դեղագործական ձեռնարկություն

Գավառի բժշկական կենտրոն

«ՕՔՍԻՋԵՆ» էսթետիկ բժշկական կենտրոն

«ԱՐԳԻՆԵ ԴԱՎԹՅԱՆ» էսթետիկ բժշկական և գեղեցկության կենտրոն

Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարան

ՈՒՍԱՆՈՂԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ուսանողի գիտելիքների գնահատումն իրականացվում է դասընթացի ավարտին միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման, ստուգարքների և տարբերակված ստուգարքների միջոցով, որոնք անցկացվում են գրավոր և բանավոր կարգով:

Քննությանը չներկայացած, չթույլատրված և անբավարար գնահատական ստացած սովորողը 2 անգամ հնարավորություն է ստանում վերահանձնել:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գավառի պետական բժշկական քոլեջի ուսանողական խորհուրդն ուսանողների ինքնակառավարման, ներկայացուցչական, ընտրովի մարմին է:

Գավառի պետական բժշկական քոլեջի ուսանողական խորհուրդն ապահովում է ուսանողների ինքնավարության և ուսանողական ինքնակառավարման գործընթացներն ողջ ուսումնառության շրջանում, արտահայտում և պաշտպանում է ուսանողների շահերը, նպաստում նրանց հասարակական, գիտական, մտավոր, ստեղծագործական, ֆիզիկական, մշակութային, բարոյական և հոգևոր զարգացմանը:

Գավառի պետական բժշկական քոլեջի ուսանողական խորհուրդն օժանդակում է նաև ներքոլեջային կյանքին վերաբերվող հարցերի լուծմանը:

Նորեկների ընդունելություն

Հանդիպում դիմորդների հետ

ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՂՂՈՐԴՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գավառի պետական բժշկական քոլեջում գործում է կարիերայի ուղղորդման կենտրոն, որի հիմնական նպատակն է՝ կարիերայի վերաբերյալ տեղեկատվության, խորհրդատվության, ուղղորդման, ինչպես նաև կարիերայի պլանավորման կարողությունների ձևավորման միջոցով նպաստել աշխատաշուկայում ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, աջակցել իրենց մասնագիտությամբ զբաղվածության հնարավորությունների բացահայտմանը:

Կենտրոնն ակտիվ համագործակցում է գործատուների, զբաղվածության տարածքային կենտրոնի, տարբեր հասարակական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների հետ:

Համագործակցություն Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության հետ

Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարանի հետ

Համագործակցություն
Գավառի ավագ դպրոցի հետ

Վանաձորի բժշկական քոլեջի հետ

Էյ Թի Փի բարեգործական հիմնադրամի հետ

Այցելություն Երևանի պետական տնտեսագիտական համալսարան

Համագործակցություն ՄՄԾ Գավառի տարածքային կենտրոն հետ

Վարդանյան՝Ս ուսումնական կենտրոն

Այցելություն Երևանի բուսաբանական այգի

Համագործակցություն «Վարդգես Պետրոսյանի անվան մարզային գրադարան»-ի հետ

Այցելություն Սևանի բուսաբանական այգի

Համագործակցություն Գավառի պետական երաժշտական քոլեջի հետ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Երևանի հենակետային բժշկական քոլեջ

«Ֆարմատեք» դեղագործական ընկերություն

Երևանի քիմիա - դեղագործական ընկերություն



Առաջին բուժօգնության դասընթաց Երևանի Մ. Հերացու անվան բժշկական համալսարան

ՈՉ ՖՈՐՄԱԼ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ՔՈԼԵՋՈՒՄ

Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի փորձագետ Սիփան Ասատրյան

Ոստիկանություն-Քոլեջ համագործակցություն

ՀՀ ԳԱԱ Ա. Թախտանջյանի անվան բուսաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող Նինա Ղանդիլյան

«ԱԶԱՏ ԹՌԻՉՔ» սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրամ

Հայկական Կարիտաս ԲՀԿ

«Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն

«ԱԶԱՏ ԹՌԻՉՔ» սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրամը

ՄՄԾ Գավառի տարածքային կենտրոն

«Ա. Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն»-ի Գեղարքունիքի մասնաճյուղ

ՄԵՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾ»

«Քույրական գործ» մասնագիտությամբ սովորողներն ստանում են «բուժքույր/բուժեղբայր» որակավորում: Նրանց գործունեությունն ուղղված է առանձին անձանց, ընտանիքներին, բնակչության խմբերին օգնություն ցուցաբերելուն և ներառում է՝ բնակչության առողջության պահպանումը և ամրապնդումը, հիվանդությունների կանխարգելումը, բժշկի ախտորոշիչ և բուժական նշանակումների կատարումը, հիվանդների համալիր խնամքը և առողջության վերականգնումը:

«ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԳՈՐԾ»

«Մանկաբարձական գործ» մասնագիտությամբ սովորողներն ստանում են մանկաբարձի ոակավորում, որոնց գործունեության օբյեկտը կինն է, նրա ընտանիքը և հասարակությունը: Նրանց գործունեությունը նպատակաուղղված է ընտանիքի պլանավորմանը և վերարտադրողականության ապահովմանը: Մանկաբարձը հսկում և զննում է կնոջը հիղիության, ծննդաբերության և հետծննդյան շրջանում, ցուցաբերում է խորհրդատվական օգնություն կնոջը և նրա ընտանիքին:

«ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»

«Դեղագործություն» մասնագիտությամբ սովորողները (առկա/հեռակա) ստանում են դեղագործի որակավորում և նրա գործունեությունն ուղղված է բնակչությանը դեղերով և բժշկական նշանակության ապրանքներով ապահովմանը, դեղերի պահպանման, պատրաստման, որակի հսկման և բացթողման իրականացմանը, բնակչության բուժկանխարգելիչ հիմնարկների մասնագետների շրջանում դեղագիտության բնագավառի տեղեկատվական և խորհրդատվական աշխատանքների իրականացմանը:

«ԱՏԱՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾ»

«Ատամնատեխնիկական գործ» մասնագիտությամբ սովորողները ստանում են ատամնատեխնիկի որակավորում, ովքեր իրականացնում են ատամնապրոթեզների՝ շարժական և անշարժ, օրթոդոնտիկ և դիմածնոտային ապարատների պատրաստումը և , վերանորոգումը՝ աշխատելով ատամնատեխնիկական սարքավորումների, գործիքների ու նյութերի հետ:

«ԲՈՒԺԱԿԱՆ ԿՈՍՄԵՏՈԼՈԳԻԱ»

«Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտությամբ սովորողները ստանում են բուժքույր/բուժեղբայր կոսմետոլոգի որակավորում, որնոց գործունեությունն ուղղված է անձի պատշաճ գեղագիտական տեսքի և առողջության պահպանմանը: Կոսմետոլոգն իրականացնում է մարդու մարմնի գեղագիտական խնդիրների պատճառների բացահայտում և շտկում:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՔՈԼԵՋՈՒՄ

Ծառատունկ

Այցելություն պատմամշակութային վայրեր

Համբարձման տոն

Տեարնընդառաջ

Հիշում ենք ու պահանջում…

Ամանորը քոլեջում

Ցուցահանդես - վաճառք

Շաբաթօրյակ

ՈՒսումնական վարժանքներ

Երգիր, թե կարող ես…..

Մենք ենք տերը մեր երկրի….

Բնության գրկում

Ընտրում ենք լավագույն ուսանող …

ՄԵՐ ՇՆՈՐՀԱԼԻՆԵՐԸ.....

ՄԵՐ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ , ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
<<ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ>> ՊՈԱԿ-Ը

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԿԱՆ (ԱՆՎՃԱՐ, ՎՃԱՐՈՎԻ) ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ (ՎՃԱՐՈՎԻ) ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ	ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ		ԿՐԹՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ
	ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ	ՄԻՋՆԱԿԱՐԳ	
ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾ	4 ՏԱՐԻ	3 ՏԱՐԻ	ԱՌԿԱ
ԱՏԱՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾ	3 ՏԱՐԻ	2 ՏԱՐԻ	ԱՌԿԱ
ԲՈՒԺԱԿԱՆ ԿՈՍՄԵՏՈԼՈԳԻԱ	3 ՏԱՐԻ	2 ՏԱՐԻ	ԱՌԿԱ
ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ	3 ՏԱՐԻ	2 ՏԱՐԻ	ԱՌԿԱ/ՀԵՌԱԿԱ

Փաստաթղթերն ընդունվում են էլեկտրոնային եղանակով՝ https://dimord.emis.am/ կայքում :

Դիմորդը՝ կրթության կառավարման տեղեկատվական համակարգում էլեկտրոնային եղանակով լրացնում է դիմում հայտ, որը ներառում է՝

- անձնական տվյալները (անուն ազգանուն հայրանուն, ծննդյան օր ամիս տարեթիվ, էլեկտրոնային հասցե, հեռախոսահամար),
- հանրային ծառայության համարանիշը կամ օրենքով սահմանված կարգով դրանից հրաժարվելու մասին տեղեկանքի համարը
- լուսանկար, կրթության մասին փաստաթղթի (դիպլոմի դեպքում նաև ներդիրի) պատճենը,
- անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր, կամ ծննդյան վկայական՝ մինչև 16 տարեկան դիմորդի համար, կամ զինվորական գրքույկ, կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանության բաժինների կողմից տրվող անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, կացության վկայական, փախստականի վկայական),
- կցագրման վկայականի պատճենը (զորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զինհաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ չզորակոչվելու պատճառը հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից՝ Հանրապետական զորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում),
- ընդունելության արտոնության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում
- իր ընտրած մասնագիտության համար պահանջվածից ավելի բարձր կրթության ավարտական փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում), ինչպես նաև այդ մասնագիտությանը համապատասխան՝ վարպետային ուսուցման որակավորման կամ կարճաժամկետ դասընթացի վկայականի պատճենը (առկայության դեպքում),
- միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաների, փառատոների) դիպլոմների պատճենները (առկայության դեպքում),
- պետական բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար տվյալ տարվա, ինչպես նաև նախորդ տարվա հանձնած ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ փաստաթղթի պատճենը (առկայության դեպքում),
- աշխատանքի վայրից տեղեկանքի պատճենը (առկայության դեպքում),
- Դիմում հայտ ներկայացրած ուսումնական հաստատության հաշվեհամարին / ՀՀ 9001178000023/ փոխանցած գումարի (ՀՀ 1000 դրամ) անդորրագրի պատճենը:
- Դիմորդը կարող է դիմել մեկ ուսումնական հաստատություն մեկ մասնագիտության հայտագրմամբ՝ անվճար և վճարովի ուսուցման հիմունքով:
- Ներկայացված կեղծ տեղեկատվության համար դիմորդը ենթակա է օրենքով սահմանված կարգով պատասխանատվության:

Հարցերի դեպքում կարող եք դիմել ընդունող հանձնաժողովին:
Հասցեն՝ ք. Գավառ, Նալբանդյան 91/1 հեռախոս 099262648
Facebook՝ Գավառի պետական բժշկական քոլեջ

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՏՆՕՐԵՆ ՀԱՅԿ ԱՂՎԱՆԻ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «Գավառի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ,

ք. Գավառ, Նալբանդյան 91/1

Հեռախոս +374 (33) 026 6230

Էլ հասցե gavarstatemedicalcollege@mail.ru

gavarstatemedcol@gmail.com

Գավառի պետական բժշկական քոլեջ

Կարիերայի կենտրոն

Գավառի պետական բժշկական քոլեջ